


# Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Արֆին» Վարկային միություն Սահմանափակ  
Պատասխանատվությամբ Ընկերություն

31 դեկտեմբերի 2021թ.



# Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

# Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ  
ՀՀ, ք. Երևան 0015  
Երևան Պլազա  
Բիզնես Կենտրոն  
Գրիգոր Լուսավորիչ 9  
Հ. + 374 10 500 964

Grant Thornton CJSC  
Yerevan Plaza Business Center  
9 Grigor Lusavorich street  
0015 Yerevan, Armenia  
T + 374 10 500 964

«Արֆին» Վարկային միություն Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության  
մասնակցին

## Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արֆին» Վարկային միություն Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ):

## Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց  
պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին

վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացի վերահսկման համար:

### *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ


հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան  
Տնօրեն

Լիլիթ Բաղդասարյան  
Աուդիտի ղեկավար



20 հունիսի 2022թ.

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2021թ.	2020թ.
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	6	216,468	207,867
Տոկոսային ծախս	6	(65,691)	(68,791)
Զուտ տոկոսային եկամուտներ		150,777	139,076
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս		(608)	(252)
Արտարժույթային գործառնություններից զուտ օգուտ	7	79	625
Այլ եկամուտներ	8	14,125	9,110
Արժեզրկման գծով ծախս	9	(15,756)	(27,272)
Անձնակազմի գծով ծախսեր	10	(31,488)	(32,391)
Հիմնական միջոցների մաշվածություն և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	16	(16,717)	(16,821)
Այլ ծախսեր	11	(24,833)	(24,073)
Շահույթ մինչև հարկումը		75,579	48,002
Շահութահարկի գծով ծախս	12	(13,943)	(9,781)
Տարվա շահույթ		61,636	38,221
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		61,636	38,221

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 57-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Շանթ.	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
<i>Ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	43,734	28,509
Մնացորդներ բանկերում	14	116,819	138,941
Հաճախորդներին տրված վարկեր	15	943,690	897,056
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	16	48,913	20,474
Հետաձգված հարկային ակտիվ	12	483	1,891
Այլ ակտիվներ	17	17,010	17,207
Ընդամենը՝ ակտիվներ		<u>1,170,649</u>	<u>1,104,078</u>
<i>Պարտավորություններ և սեփական կապիտալ</i>			
<i>Պարտավորություններ</i>			
Փոխառություններ	18	584,766	613,521
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		7,709	1,945
Այլ պարտավորություններ	19	47,944	20,018
Ընդամենը՝ պարտավորություններ		<u>640,419</u>	<u>635,484</u>
<i>Սեփական կապիտալ</i>			
Կանոնադրական կապիտալ	20	200,000	200,000
Գլխավոր պահուստ		19,608	18,844
Զբաղիված շահույթ		310,622	249,750
Ընդամենը՝ սեփական կապիտալ		<u>530,230</u>	<u>468,594</u>
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		<u>1,170,649</u>	<u>1,104,078</u>

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2022թ հունիսի 20-ին:



Անահիտ Գաբրիելյան  
Գործադիր տնօրեն

Գայանե Ֆանդունց  
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների  
բաղկացուցիչ մասը կազմող 11-ից 57 էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ համատեղ:

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Կանոնադրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	200,000	18,844	249,750	468,594
Տարվա շահույթ	-	-	61,636	61,636
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	61,636	61,636
Հատկացում պահուստին	-	764	(764)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	764	(764)	-
Հաշվեկշիռը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	200,000	19,608	310,622	530,230
Հաշվեկշիռը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	200,000	17,453	212,920	430,373
Տարվա շահույթ	-	-	38,221	38,221
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	38,221	38,221
Հատկացում պահուստին	-	1,391	(1,391)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	1,391	(1,391)	-
Հաշվեկշիռը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	200,000	18,844	249,750	468,594

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից 57 էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ համատեղ:



# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2021թ.	2020թ.
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Շահույթ մինչև հարկումը	75,579	48,002
<i>Ճշգրտումներ</i>		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	16,717	16,821
Արժեզրկման ծախս	15,756	27,272
Ստացվելիք տոկոսներ	(913)	(8,436)
Արտարժույթի փոխարկումից օգուտ	(5)	(429)
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	107,134	83,230
<i>(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում</i>		
Մնացորդներ բանկերում	10,853	(130,521)
Հաճախորդներին տրված վարկեր	(78,439)	36,058
Այլ ակտիվներ	197	(337)
<i>Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում</i>		
Այլ պարտավորություններ	818	2,654
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) մինչև շահութահարկը	40,563	(8,916)
Վճարված շահութահարկ	(6,771)	(12,834)
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	33,792	(21,750)
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք	(48)	(451)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(48)	(451)

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2021թ.	2020թ.
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Փոխառությունների ստացում	73,744	120,435
Փոխառությունների մարում	(73,747)	(150,466)
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(18,000)	(18,000)
Ֆինանսական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(18,003)	(48,031)
<i>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)</i>	15,741	(70,232)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	28,509	98,597
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(516)	144
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ (ծանթ. 13)	43,734	28,509
<b>Լրացուցիչ տեղեկատվություն՝</b>		
Ստացված տոկոսներ	215,555	200,157
Վճարված տոկոսներ	(65,691)	(68,791)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից 57 էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ համատեղ: